ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Սեպտեմբեր . 91 Թ.

Ամէն մի քաղաքական կուսակցութիւն՝ գաղափարի համար կռիւ սկսելով կարող է յա[illegible] [illegible] անյաջողութեան յոյս ունենալ մի[illegible] երբ նրան հետեւում երկու անհրաժեշտ պայմանները.

1) Եթէ ժողովուրդը, որի շահերի համար մղվում է կռիւը, հասկանում է այդ կռուի անհրաժեշտ լինելը և մասնակցում է այդ կռւին թէ ուղղակի և թէ անուղղակի կերպով, գոնէ 'ի դէմս իւր ամենալաւ ներկայացուցիչների։

2) Եթէ կռուի համար ընտրուած են այնպիսի նպատակայարմար ձևեր և միջոցներ, որոնք բոլորովին համապատասխանեն ներկայ իրականութեան և պատմական րոպէի պահանջած պայմաններին։

Առաջին պայմանը, բարեբաղդաբար, մեզնում կայ. [illegible] այնքան ապացուցեց, որ հասկանում է [illegible] լծից ազատուելու անհրաժեշտութիւնը, թէև դրա համար պէտք լինի զոհել նոյն իսկ իւր ստացուածքն ու կեանքը։ Հայ ժողովուրդն այդ ապացուցեց մասսայական ցոյցերով Կա[illegible] [illegible]սում և մի շարք անհատական ու [illegible] [illegible]խական ձեռնարկութիւններով։

Աւելորդ է ասել թէ հայ ժողովուրդը [illegible] նել է՞ արդեն կռուի անհրաժեշտութիւնը [illegible]. Նա ոչ միայն հասկանում է այդ, [illegible] իր այդ գիտակցութեան [illegible] է հայ ինտելլիգենցիայից։ Ինչ ասել է՝ ինտելլիգենցիան միայն արձագանք տուեց ժողովրդի պատերազմական կոչին, որ լսուեց անսովոր կերպով։ Այն՝ ինչ որ սպասում էին ապագայում, թէև մօտ ապագայում, կատարուեց այսօր, և այն էլ այնպիսի արագ ձևով, որ վերջ տրուեց բոլոր կասկածներին, և մինչև անգամ ամենաթերահաւատներն իսկ համոզուեցին, որ վիճակը դրուած է, Թուրքիան անցկացած, — որ հայկական յեղափոխութիւնն սկսուած է։

Ինչ պէտք է անէր այն ինտելլիգենցիան, որ ճանա[illegible] է իւր պատմական կոչումը — ծառայել ժողովրդի — աշխատաւոր մասսայի շահերին։ Նա պէտք է շտապէր ժողովրդի կոչին, նա պէտք է գնար իւր գիտակ[illegible] [illegible] օգնելու ժողովրդին այդ դժուար [illegible] այն կռիւը, որ սկսում էր ժողովուրդը դարաւոր ճնշման ու անարդարութեան դէմ։ Եւ ինտելլիգենցիան յետ չմնաց ժողովրդից, հետևեց նրան։

Այդ հանգամանքը նոր շարժման ամենաբնորոշ և խորհրդաւոր կողմն է, նրա յարատեւութեան և յաջողութեան ամենամեծ գրաւականն է։

«Բազումք են կոչեցեալք, բայց սակաւք ընտրեալք»։

Իրաւ է, բոլոր ինտելլիգենտ գործիչները մինչև վերջը չեն հասցնիլ գործը, շատերը գուցէ կանգ կ'առնեն կէս ճանապարհին, կամ հէնց ճանապարհի սկզբին, — բայց այդ ոչինչ. այն ժողովուրդը, որ հասել է կռուի անհրաժեշտութեան գիտակցութեանը և կարողացել է իւր վրայ առնել այդ կռուի՝ որքան ծանր, և նոյնքան փառաւոր նախաձեռնութիւնը, կըկարողանայ իւր միջից դուրս [illegible] բերել յետևից նորանոր ինտելլիգենտ [illegible]մեր, որոնք [illegible] կըլինին վճռել յեղափոխական շրջանի (էպօխա) խնդիրները։

Անցնենք երկրորդ պայմանին։

[illegible] առաջ պէտք է [illegible] ունենալ, որ մեր [illegible]ը՝ ժողովրդական [illegible] է նրա դարաւոր բռնակալների [illegible] [illegible]ական կռիւ, նա չի կարող կանոնա[illegible] [illegible] պատերազմի ձև ունենալ. ինարկէ եթէ մի արտակարգ դէպք չպատահի։ Մտախաբութիւն է երևակայել թէ Տաճկական-Հայաստանում կամ նրա սահմաններում կարելի է պատրաստել ու կազմակերպել մի բանակ, զնդեր, նոյն իսկ ամբողջ զօրք, որ մի օր յանկարծ կըխաղայ՝ մեծ ճակատամարտ տալու, և այդպիսով կըլուծի և կըվերջացնի հայերի ազատութեան գործը։

Ոչ, հայ ժողովրդի կռիւը պէտք է պարտիզանական կռիւ լինի. մենք մեր այժմեան [illegible]թեան մէջ ուրիշ կերպ կռուել չենք կարող. կանոնաւոր պատերազմ, իսկական ճակատամարտներ անհնար

ֆն մեզ համար։ Այդ է թելադրում մեզ առողջ դատողութիւնը և այդ է սովորեցնում մեզ նոյն իսկ ուրիշ ազգերի — Բուլղարների, Իտալացիների, Ցոյների պատմական օրինակը։ Այդպէս պէտք է կառուցենք և մենք գոնէ մինչև այն ժամանակ, երբ պարտիզանական կռուի ջոկ-ջոկ ալիքները միախառնուելով կը կազմեն ժողովրդական ապստամբութեան յորդահոս հեղեղ, որ կ'սրբի կրտանի իւր հետ Հայաստանի երեսից՝ տգիտութեան, աղքատութեան, անարդարութեան դարաւոր փոշիք։

Այդ պարտիզանական պատերազմի նախանշանները կը լինին ժողովրդից դուրս եկած մարտնչող մարդիկ, որոնք միայն ձև են փնտրում արտայայտելու իրանց հրաշալի զգացմունքները, ոյժերն ու քնդունակութիւնները։

Այդ ձևը — հրոսակային (հայդուկային՝ աւազակային) խմբերի կուիւը — կը թելադրեն ժողովրդին և կը ժողովրդականացնեն՝ յեղափոխական ինտելիգենցիայի ներկայացուցիչները։

Շատ մեծ դեր են խաղացել հրոսակային խմբերն այս դարում ազատուած մասի ազգութիւնների պատմութեան մէջ. այդպիսի մեծ դեր կարող են և պէտք է խաղան նրանք նաև մեզ համար։ Պատշեան հանդիսանալով ամեն տեսակ բռնաւորների դէմ՝ սկսած սատրապ աստիճանաւորից մինչև քիւրդ աւազակը մի կողմից և արիւնարբու հարկահանի ու վաշխառուի դէմ միւս կողմից, այդ խմբերը՝ ապագայ պատմութեան կենդանի դրօշակներ կը լինին։ Պարտիզանական չարաչարութիւններ գործելով բռնաւորների վրայ, պաշտպանելով ճնշուածներին, նրանք կ'ելէքտրականացնեն ժողովրդի միտքն ու զգացմունքը, կռուի կենդանի օրինակներ կը տան ժողովրդին և այդպէս մասամբ գաղափարական կերպով, մասամբ իրականապէս կը ժողովեն իրանց շուրջը և կը կազմակերպեն կռուելու փոքրիշատէ ընդունակ բոլոր տարրերը։

Այդ ոյժերը կանոնաւոր կերպով կազմակերպելու և ամբողջ Հայաստանում այդ խմբերի միջև մի ընդհանուր կապ հաստատելու համար օգնութեան կը հասնի ինտելիգենցիան, որ գլխաւորապէս պէտք է զբաղուի հէնց յեղափոխական ոյժերի կազմակերպութեամբ։ Ապստամբութեան գաղափարը քարոզելու նա պէտք չի ունենայ։ Տաճկաստանի այժմեան կառավարութեան ձևը ամենալաւ քարոզիչն է այդ գաղափարի։ Ինտելիգենցիան միայն պէտք է որոշի յեղափոխական գրական իդէալները և կազմակերպի եղած յեղափոխական ոյժերը։

Երբ այդ կազմակերպութիւնը գլուխ գայ, այնուհետև կը հեշտանայ ժողովրդին զէնք մատակարարելը և ինքնիրան կը մեռնի թէ ընթացիկ կռուի և թէ ապստամբական շրջանի բոլոր միջոցների հարցը։

Իսկ այդպիսի միջոցներ փնտրելու կարիքութիւն չկայ։ — յեղափոխական ոգեշնչի մէջ այդ հարցը վաղուց վճռուած է։ Մենք անչափ մաս կանենք հասնելու այդ հարցի դիպայ։

Յեղափոխական հարուստ տեխնիկայով զինուած գաղափարի կազմակերպութեան տարածումն ու զարգացումը բնականաբար առաջ կը բերի առիթի յանախ կը գինուող խմբերին ցոյցեր տաճկական բռնակալութեան դէմ, որոնք մի կողմից կը դատապարտեն ժողովրդին՝ յեղափոխական ոգին, միւս կողմից կը քայքայեն՝ Տաճկաց տէրութեան՝ առանց այն էլ խախուտ կազմը։

Եւ երբոր յեղափոխութեան պարտիզանական կռուի ալիքները կ'ողողեն ամբողջ Տաճկական-Հայաստանը, երբոր նրանք անվերանորոգելի ձեղքեր կը բանան Տաճիկ տէրութեան խոխուտ շինուածքի մէջ, երբոր վերջապէս Եւրոպան կը տեսնի, որ Տաճկաստանի խնդրութիւնն անդամալի կերպով խեղդուած է երկու անհաշտ՝ մինչ արեան վերջին կաթիլը մաքառել վճռած թշնամիների կռուով, երբոր նա կը տեսնի, որ Տաճկաստանում իւր գործ դրած դրամագլուխները՝ մնասվում են և կորչելու վտանգի են ենթարկվում և որ Ասիական Տաճկաստանում յեղափոխական չհանդչող կայծը բոցավառուելով կարող է Եւրոպական զարհուրելի հրդեհի պատճառ դառնալ, — այն ժամանակ կը ցայ վճռական րոպէն և ամբողջ ժողովուրդը իրրև մի մարդ, մի հոգի ոտի կը կանգնի և զէնքի ոյժով ձեռք կը բերի իւր մարդկային իրաւունքները, այն իրաւունքները, որ այսքան դար անխիղճ կերպով ոտնակոխ են արել տաճիկներն ու քրդերը։

Տաճիկ կառավարութիւնը չի կարողանալ խեղդել յեղափոխութիւնը ոչ՝ երբ առաջին շրջանում, ոչ՝ էլ վերջինում։ Ամալգամացիան (դեցենտրալիզացիա) ու տեղական ինքնուրոյն նախաձեռնութեան վրայ հիմնուած յեղափոխական կազմակերպութիւնը՝ իրրև հարիւր գլխանի վիշապ կը դարձի ամեն տեղ և ամեն տեսակ ձևերով ու հնարքներով։ Նա կը մտցնի իւր աւերիչ զէնքը թէ քաղաք և թէ գիւղ, թէ կաշառակեր աւտրիճանաւորների և թէ արիւնարբու վաշխառուների շրջանը, մի խօսքով նա սրով ու հրով կը ջնջի ժողովրդի բոլոր թշնամիներին ու բռնակալներին։ Խարիկ արիւնահեղ փորձեր ևս կը լինին յեղափոխական վիշապին ոչնչացնելու, բայց ի՞նչ ուր — մի կտրուած գլխի տեղ կը բուսնեն հարիւրաւոր գլուխներ, մի կաշանաւորուած ու ջարդուած խմբի տեղ՝ յարութիւն առած ու ինքնագործունեայ ժողովուրդն առաջ կը բերի հարիւրաւոր նոր խմբեր։ Շատ արիւն կը թափուի, շատ աչքեր կ'արտասուեն, բայց մի՞թէ այժմ չի արիւն ու արտասուք

տատում էին ողողում Հայաստանի հովիտները, և վերջապէս ինչ՝ արած որ այժմեան մարդկութիւնն առանց արիւնալից փորձառութիւն սովորելու ազատութիւն չի տալիս ոչ ոքի: Ու մեր ժողովուրդը կվճարի այդ փարձը, այդ պարտքը՝ ոգևորուած այն մտքով, որ վիճակն արդէն գցուած է և յաղթութիւնը իւրն է լինելու, և միայն իւրը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Դրօշակ»-ի անցեալ համարում մենք գրել էինք, որ մեր այժմեան պահանջները մօտաւորապէս նոյն են, ինչ որ յայտնուած են Ներսէս Պատրիարքի Ծրագրում:

Որովհետև այդ բառերը տեղիք են տալիս թիւրիմացութեան, մենք կարևոր ենք համարում յայտնել, որ մենք այդ գրելով աչքի առաջ ենք ունեցել այն դէպքը, եթէ Սուլթանը իւր բարի կամքով մտցնի Տաճկական-Հայաստանում Ներսէս Պատրիարքի Ծրագրում պահանջուած բարենորոգութիւնները, որ շատ անհաւանական է: Սուլթանը իւր վարմունքով օրէցօր աւելի է համոզում ամենքին, որ Տաճկական-Հայաստանի համար ազատութիւնից դուրս փրկութիւն չկայ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տաճկահայերի տրամադրութիւնը.

Յեղափոխական գործի համար ամենաառաջնակարգ նշանակութիւն ունեցող հարցն այն է, թէ ինչպէս է վերաբերւում ժողովուրդը դէպի յեղափոխական գործը: Եթէ մի երկրում գոյութիւն ունին յեղափոխութեան բոլոր միւս պայմանները, բայց բացակայում է ժողովրդի բարեյաջող տրամադրութիւնը, եթէ մի տեղ ժողովրդի ահագին մեծամասնութիւնը, չենք ասում թշնամաբար, անտարբեր է վերաբերվում դէպի յեղափոխական գործը, այնտեղ միքանի սերունդ գործիչների անընդհատ աշխատանքը է պահանջվում նպաստաւոր տրամադրութիւն ստեղծելու համար: Բարեբաղդաբար այսօրուայ հայ յեղափոխական գործիչն ազատուած է այդ նախապատրաստուած գործունէութիւնից. մեր վերջին տասը-քսան տարուայ պատմութիւնը, տաճկական իշխանութեան անտանելի պայմաններն այսօր առաջ են բերել մի յեղափոխական ազգաբնակութիւն, որ միայն առողջ հանգամանքի է սպասում թօթափելու իրանից տաճկական լուծը:

Այսպէս կարծելու մեզ իրաւունք են տալիս Տաճկական-Հայաստանից հասած բազմաթիւ տեղեկութիւնները. այդպիսի տպաւորութիւն դուրս են բերել և մեր գործակալները, շփուելով տեղական ժողովրդի հետ:

Այստեղ առաջ ենք բերում մեր գործակալներից մէկի հաղորդածը: «Դաշնակցութիւնը» նրան մի որոշ յանձնարարութիւն էր տուել, որին գլուխ բերելու համար, հարկաւոր էր միքանի մարդկանց աջակցութիւն: Կազմուեց մի խումբ: Խումբը՝ բաղկացած եօթ զինուած մարդուց, անցաւ սահմանը. հարկաւոր էր անցնել թշնամիների միջով. սահմանի վրայ նրանց սպասում էր սահմանապահ զօրքը, երկրի խորքերում էլ զափթիէները և, որ ամենագլխաւորն է, մահմեդական կատաղած ազգաբնակութիւնը, և այս բոլորի միջով պէտք է անցնէին եօթ զինուած հայեր. մարդիկ, որոնք շատ քիչ էին ծանօթ երկրին և տեղական հանգամանքներին, և ինչ էք կարծում. ամբողջ մի ամիս ու կէս խումբը մնաց այդ երկրում, անցաւ ահագին տարածութիւն, անցաւ տասնեակ գիւղեր, պատահեց հազարաւոր մարդկանց և ամբողջ ժամանակ համարեա ոչ մի մատնութիւն, ոչ մի վատութիւն չեղաւ հայերի կողմից. խումբը կատարեց իւր վրայ դրած յանձնարարութիւնն առանց փորձանքի ու անվտանգ հասաւ իւր տեղը: Դա կարելի՞ բանէր, եթէ նրանց նպաստած չլինէր տեղական հայ ազգաբնակութիւնը. և իրօք առանց հայերի աջակցութեան մեր մարդիկը մի քայլ անգամ անկարող էին անել իրանց համար մի անծանօթ երկրում: Մերոնց ընդունում էին իրանց տներն առանց տարակուսանքի ու կասկածի, պահում պատսպարում էին, ճիգ էին թափում նրանց ամեն մի յարմարութիւն տալու, առաջնորդում էին գիւղից գիւղ (ի հարկէ առանց վարձատրութեան). և գիտէք ինչ քայլ էր նրանց արածը. այդ այն քայլերիցն է, որի համար մարդկանց կիզիչ Արաբիայի խորքերն են տանում: Մեր մարդկերանց գնալուց մի ամիս առաջ Տաճիկ կառավարութիւնը սաստիկ սպառնացել էր այն ամեն մէկին, որ ապաստարան կամ որևիցէ դիւրութիւն կըտայ «Ընկերութեան» մարդկանց, և այդ մտքով ստորագրութիւն էր վերցրել գիւղի իշխաններից:

Մտնենք մի քանի մանրամասնութիւնների մէջ:

Մեր մարդիկ, իջնելով մի որևէ գիւղացու մօտ, պատուիրում էին նրան ծածուկ պահել միւսներից: Այդ երբեմն, թէև քիչ անգամ, յաջողւում էր նրանց: Այսպէս պատահեց և Ն գիւղում: Մերոնք գիշերեցին մէկի մօտ և դուրս եկան գիւղից չնկատուած ոչ ոքից: Վերադարձին մեր մարդիկ անցան նոյն գիւղով և իջացին նոյն մարդու մօտ: Տանտէրը պատմել էր թէ նրանց հեռանալուց յետոյ գիւղումն իմացել էին և գիւղացիք սաստիկ անբաւական էին մնացել իրանից, ասելով. «ինչ է, մենք անօրէն ենք, քիւրդ ու տաճի՞կ ենք, որ մեզնից կըծածկէիր, կամ քեզնից վատ հայ ենք»:

Ցաճախ բանն իսկոյն բացվում էր և այն ժամանակ մեր ընկերների իջած տեղն աւելի մի ուխտատեղի էր նմանում։ Մկը մանում էր, միւսը դուրս գալիս և այսպէս շարունակ. մերոնցից մկը մի գիւղում հեռաւոր դէպքին էականատես եղել. մէկն իմանալով մերոնց գալուստը, ընկել է գիւղ՝ գոռալով՝ «ողորմ, դուրս եկէք. Ա—ենց տունը երկնքից լոյս է իջել»։

Գալիս են հաւաքվում։ [illegible] է խոստացութիւն։ Խօսակցութեան ամենաառաջին և ամեն տեղ կրկնուող նիւթն է. «ինչ կլինի, ինչ կլխորհի մեր մասին «Ընկերութիւնը». ինչու չի գար մեզի օգնելու. չգիտէ՞ նա մեր սև օրը, չգիտէ՞ մեր դաւը», և սկսվում են դանդաոներ, անվերջ դանդաոներ իրանց դրութեան վերաբերմամբ տանջվի ու քրտի ձեռքից։ Ե[illegible] չգանդաոուեն. չկայ մկը, որի զգացմունքներ[illegible] կերպով վիրաւորուած չլինէին այդ բարբարո[illegible]։ Ամեն ամեն տպաւորութիւն է թողել մերոնց [illegible] մի գիւղացի։ «Տեսնում է՞ք այս մատները, [illegible], հանելով ծոցի քսակից մի քանի [illegible]. սրանք իմ եղբօր մատներն են, որոնց քրտերն իմ աչքին առաջ մորթեցին և ես չեմ հանգստանալ, մինչև չթափեմ թշնամիներիս արիւնը. ես այդ ուխտել եմ և այս մատները պիտի ամեն օր յիշեցնեն ինձ իմ ուխտը»։

Ո՞ւր որ գնաք, որտեղ էլ ոտք կոխէք, ամեն տեղ միևնոյն լացուկոծի ձայնը կլսէք. ամեն տեղ մեծ ու փոքրին վրէժխնդրութեան ոգին է տիրապետել. այսինչ գիւղից քշել տարել են Մկոյի ոչխարները, միւս տեղ վիրաւորել են Սարգսին, մի երրորդ տեղ սպանել են Ստեփանին, ան պատուել կնոջը, փախցրել մատաղահաս աղջկան, և այլն և այլն...։

Այստեղ՝ շրջապատում էին մերոնց գիւղացիք և ամեն մէկն ուզում էր իր դարդը պատմել. եթէ տանտերը չլիներ, քնելու անգամ ժամանակ չի[illegible] տալ։ Բայց տանտէրը հիւրերին հանգստութիւն տալու համար յաճախ ստիպուած էր լինում փակել դռները. բայց էլի հնար չէր լինում եկողներից ազատուելու։ «Աղբար, դուռը բաց, քիչ մը նայենք», կրկնում էին բախելով դուռը և գալիս էին ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք։ Այս վերջինները գուլպաներ էին՞ ընծայ բերում, իրանց ծառայութիւնն էին առաջարկում —լուանալ, կարկատել մերոնց շորերը։

Մեր գործակալն ընտրում էր իջևանելու համար զուտ հայկական գիւղեր, բայց և այս վերջիններում երբեմն պատահում էին քրդեր. այսպէս գիւղերից մէկում պահապանը քիւրդ էր. դա մի կերպ հասկանում է, որ եկողներն «Ընկերութեան» մարդիկ են։ Իսկոյն մի քրդի տղի միջոցով իմացնում է հարևան գիւղի քրդերին. այդ քրդերը պատրաստվում են յարձակումն գործելու. այս գիւղից մի հայ շտապում է այն գիւղը, ուր իջել էին մերոնք և հաղորդում է սպառնացող վտանգը։ Ամբողջ գիւղը տակնուվրայ է։ [illegible]. բարձրանում է կանանց լացուոգոչը, ողորմարդիկ դուրս են թափվում տներից՝ որը զագանակ ձեռքին, որը գերանդի, մէքանին էլ հրացան։ Այստեղ ի դէպ է ասել, որ գիւղերից շատերում հայերը քրդի-ազնալուի դեմ ունին միայն նահապետական զագանակն ու գերանդին, բայց ժողովուրդը անեղային կերպով ձգտում է զինուելու. ամենքն էլ ծախում են ամենաանհրաժեշտ իրեղէնները և դրանցից ստացած դրամը զէնքի տալիս։ Պատահել է գիւղեր, ուր գիւղացիք բաւականաչափ զինուած են եղել. բայց մերոնց այդպիսի գիւղեր բացառութիւն են կազմում. գլխաւոր արգելքը —նոր ձևի հրացանների ապաստանց թանգութիւնն է։ Եւ ով ձեռք է բերում մի այդպիսի հրացան, նա իր աչքի սիս է պահում։ Մեսալ են այն կասկածները, իբր թէ հրացաններ ձեռք բերելը մի վաճառական գործ է, իբր թէ էժան գնում են և թանգ ծախում քրդերին։ այսպիսի դէպքեր շատ են։ բացառութիւններ են և այդպիսիները սատիկ հարածվում են հայերի կողմից։

Մեր գործակալը սեռեելով գիւղին սպառնացող վտանգը, վճռում է հեռանալ։ Բայց ով է թոգնողը գիւղացիք երկար ժամանակ չէին հասկանում. միայն կամաց-կամաց կարողացվում են միայն այն պայմանով, որ իրանց կհասցնեն մերոնց մին և մի տեղով անց։ Գիւղից հեռանալը մի սրտաշարժ տեսարան էր։ Քահանան գընում էր առաջ ընկած՝ գլխի համեմատ սաղմոսներ կարդալով և շարականներ երգելով. դրան հետևում էին գիւղի հասարակ բոլոր ազգաբնակները, հզոր էր մերոնց ազատչանքը՝ վերադառնալ։ «Չէ, թող առաջ մեզ սպանեն, յետոյ՝ նոր», ասում էին նրանք։ Երկար դրնում էին այս-էն, վերջապես մի տեղ կանգ առան. այստեղից, նրանց դարձելիքով, այլևս փանդ էր՞ ընպառնում։ Քահանան կարդաց իր վերջին աղօթքը. աւելացնելով. «Գնացէ՞ք, որդիքս, Տէրն ընդ ձեզ. մեծ է զօրութիւն Քրիստոսի, Նա կազատի ձեզ ամեն փորձանքներից», և տեսնեցին հառաչներ, մաղթանքներ... Հեռուից լսուեց ձիաների սանձաձայն. գիւղացիների մի մասը գնաց այն կողմը, որտեղից լսվում էր սանձաձայնը։ Ձիաւորները մօտեցան. դրանք երկու հոգի էին, Մկը թռաւ ձիուց. «Որոնք են ապրանք, որոնք»։ Տեսնելով մերոնց՝ նա սկսեց մէկ-մէկ համբուրել մերոնց, նորից համբուրել. «Քանք Քեզ Աստուած, որ կարող զացայ տեսնել,» ասում էր նա։ Եկողը հարևան գիւղացի Ս. աղան էր։

Դեռ գնալուց առաջ երբ Ս. աղան իմացել էր մերոնց անցնելը, խնդրել էր որ վերադարձին իրանի հետ տան

այժմ իմաց էին առել, նա եկել էր գիւղ և այնտեղ չգտնելով, շտապել էր ցոյց տուած ճանապարհով։ «Ես ուզում էի ձեզ տեսնել, եղբարք», ասում էր նա համբուրելով. մի քանի ասելիք ունիմ, հասցրէք «Ընկերութեանը»։ Ասացէք «Ընկ.», որ այլևս անկարող ենք տանել, թող նա դայ և մենք մեր կեանքը, մեր ունեցած-չունեցածը չենք խնայիլ նրան օգնելու։ Եղբարք, ասել է նա, դիմելով գիւղացիներին, դուք գիտէք, որ ես ասրեկան այսքան կոտ ցորեն, այսքան գարի ունի՞, այսքան խուրձ եմնջա։ Այդ բոլորը ես չեմ ծախելու, բոլորը տալիս եմ «Ընկերութեանը»։ Ուրիշ եկան ուրիշներն էլ և ամեն մէկը ահագին բաժին էր հանում «Ընկերութեանը»։ Նորից համբոյրներ և վերջին հրաժեշտ...։

Մի ուրիշ գիւղում գալիս են մեր գործակալի մօտ գիւղի իշխանները, ագ-ատախլները. սկսում են հարցուփորձ անել. սկզբում կասկածով են վերաբերվում դէպի մեր գործակալը, վախենալով մի գուցէ մատնիչի հետ գործ ունին բայց շուտով նրանց կասկածը փարատվում է և նրանցից մէկը հանում է ծոցից մի թուղթ ու տալիս մեր գործակալին։ Սոյն թղթով գիւղացիները պահանջում են «Ընկերութեանը» զանգատելով իրանց դրութիւնից. ազատում են, որ նա շուտով գայ, խնդրում են գէնք, խոստանալով իրանց բոլորովին նրա տրամադրութեան տակ դնել և օգնել թէ մարդով, թէ պաշարեղէնով. և այլն և այլն։ Թղթի տակ դրուած էին բազմաթիւ ստորագրութիւններ։ Իշխաններից մէկը յայտնում է, որ այդ թուղթը կազմել են իրանց մէջ բոլոր գիւղացիները և խնդրում են գործակալին, որ նոտ հասցնէ «Ընկերութեանը»։ Մեր գործակալը խոստանում է նրանց ցանկութիւնը հասցնել «Ընկերութեանը», միայն հրաժարվում է թղթից, ասելով՝ թէ ինչ կարող են այսոր կամ վաղը բռնել սպանել և թուղթը այդպիսով կարող է ընկնել իշխանութեան ձեռքը։

Չպէտք է կարծել, որ այս խոսումները լոկ խոստումներ են՝ հարկաւոր դէպքում ժողովուրդը չի մասնակցի ընդհանուր գործին. ընդհակառակն.—ժողովրդի մէջ ինքնապաշտպանութեան գաղափարը բաւականին զարգացած է. ահաւասիկ մի օրինակ։ Մեր ընկերներին հետևեալ դէպքը պատահեց. Նրանք պահոտուել էին մի բլրի վրայ, քարերի տակ և սպասում էին, որ մութին ընկեին։ Նեղ ձ՛ն, դաշտումը, երևացին երկու հայ գիւղացի, որոնցից մէկը մօտենում է բլրին, դէս ու դէն նայում, յետ դառնում իւր ընկերոջ մօտ և երկուսն էլ անցնում դնում են հետևեալ բլրի յետևը։ Զանցա։ կէս ժամ, մերոնք տեսնում են, որ նոյն գիւղացիք հայտնվում կողմից փորող տալով, մօտենում են իրանց։ երբ բաւականաչափ մօտեցան, պահուեցան քարի տակ և մէկը պատրաստուեց հրացան արձակելու։ Մերոնք հազիւ կարողացան համոզել նրանց, որ իրանք քրդեր չեն, այլ քրդի հագուստ հագած հայեր։ Բանից դուրս եկաւ, որ դրանք փնտրելիս են եղել իրանց կորած եզը և կարծել են թէ մերոնք են գողացել։

Բայց ի հարկէ չպէտք է մոռանալ, որ դարերի ընթացքում սորկութեան ղրած կնիքը բոլորովին չընջուել, անհետացել է։ Չենք կարող այստեղ չյիշատակել, որ մերոնց հետ մի երկու տեղ փորձել են վատթար կերպով վարուել։ Բայց այդ փորձերը բացառութիւններ են (ապացոյց այն, որ տասնեակ գիւղերից միայն երկուսումն է այդ պատահել) և իրանց նպատակին չեն հասնում հասարակութեան ընդդիմադրութեան շնորհիւ։ Այսպէս՝ մի գիւղում իշխաններից մէկն իմանալով որ գիւղում կան «Ընկ.» մարդկանցից, պատրաստվում է իմացում տալ իշխանութեանը, ասելով թէ ստորագրութիւն են տուել և իրանց վտանգ է սպառնում, եթէ չկատարեն խոստացածը։ Գիւղացիներն իմանալով այդ, վրդովվում են, աշխատում են համոզել և երբ այդ չի յաջողվում, երիտասարդներից մէկը մտնում է իշխանի տունը. «Աղա, եկել եմ քո հոգիդ առնեմ», ասում է նա, ուղղելով ատրճանակն աղայի սրտին։ «Ծ՛ա, խենթ ես, որ զիս կըսպանես»։ —Բա՞ս դու խենթ ես, որ այդքան մարդ կ՛ուզես ըսպանել»։ Աղան խոստանում է լռել։

Մենք բաւականանում ենք այսքանով, կարծելով որ այս փաստերը բաւականաչափ պարզում են ժողովրդի տրամադրութիւնը։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Անցեալ Յուլիս ամսում Տաճկաստանցի մի երիտասարդ՝ Ղազար անունով, կամենալով վերադառնալ հայրենիք, միանում է Վան գնացող մի քարվանի հետ։ Բայց որովհետև նա իւր հետ ունէր մեծ քանակութիւն «Արմենիա»-ների, այդ պատճառով նա վճռում է ճանապարհ գնալ միայն գիշերները, և Թիւրք-պարսկական սահմանն անցնելուց յետոյ բաժանվում է քարվանից և շարունակում է իւր ճանապարհը մենակ։ Միքանի ժամից յետոյ յանկարծ նա հանդիպում է տաճիկ զաֆթիէների, որոնք ձերբակալում են նրան և լաւ ծեծելուց ու խուզարկելուց յետոյ, գտնում են նրա մօտ յիշեալ լրագրի համարները, մի ատրճանակ և միքանի նամակներ։ Դրանից յետոյ զաֆթիէները տանում են նրան Բաշկալէ յայտնի մատնիչ Յովհաննէս վարդապետ Բազանու մօտ, որ մի ժամանակ Բարթուղիմէոսի վանքի վանահայր էր։ Տեսնելով թերթերը և նամակները, վարդապետը յայտնում է զաֆթիէներին, որ Ղազարը յեղափոխականներից է։ Երբ Դայմաղամը

նրան հարցնում է թէ՝ որտեղից և ուր երթանում այդ թերթերը, նա բոլորովին սառնասիրտ կերպով պատասխանում է, թէ ինքը Խալիլ փաշայի մարդն է և այդ թերթերն ու նամակները ուղղակի ծպտեալը էր Վանն նրա մօտ, որտեղ նրան պէտք է ուղարկեր հայ յեղափոխականներին ընդունելու գործում։ Ինչ ասաղակ հաստատում է դրան և անմիջապէս ցրեցնում Վան Վալի-փաշային։ Այնուհետև հետաքրքրում են, որ ուղարկին Ղազարին զաֆթիէների հետ ներքին թիւնների։ Երկու ժամու կէս հետաքրքրութեան վերջ Վանից Նոր-գիւղի մօտ նրանք կանգ են առնում ճաշելու և հանգստանալու համար։ Հաշիշ յեղած Ղազարը խմելով մի քանի բաժակներ գինի և օգտուելով յարմար բոլորից սկսում է փախչել։ Զաֆթիէները, տեսնելով որ նա ուշացաւ, կասկածում են, ընկնում են նրա յետևից ու սկսում են հրացան արձակել։ Այդ ժամանակ նրանց առաջն է դուրս գալիս մի զինուորուած խումբ հայերի, որ կռիւ է սկսում զաֆթիէների հետ։ Այդ միջոցին Ղազարն ատրճանակով պատում է մի զաֆթիէի և միւսին ծանր վիրաւորում։ Դրանից յետոյ խումբը և Ղազարը բոլորովին անհետանում են։ Խելքով զաֆթիէներից Ղազարի բերած բոլոր թղթերը, նրանց ձիաները, հրացանները ու ատրճանակները։ Շատով Վալին իմանում է այդ դէպքի մասին և 500 ձիաւոր է ուղարկում, որ գտնեն փախստականներին; բայց նրանց բոլոր ջանքերն իզուր են անցնում։

Այս դէպքը մեծ անհանգստութիւն պատճառեց Վանի կառավարութեանը։

Խմբի երևալը բացատրվում է այսպէս. Ղեղուզում Ղազարին երկար սպասեցրել սկսել են անհամբերանալ, և կարծելով, որ մի փորձանք է պատահել, ուղարկել են նրան ազատելու և այդպէս էլ լինում է։

ԼՈՒՐԵՐ ՏԱՃԿԱՏ-ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Թղթակցութիւն Ծ. գիւղից։

Այնթապ գաւառի մէջ եղած ճնշումներ և հարստահարութիւնք 1891 թ. մարտ ամսէն սկսեալ.

1. Քոշք և Ղարդալը գիւղի մէջ սեղ երկու մարդ չարաչար տանջանքներով կ'սպանեն քրդեր։

2. Լիդ գիւղ և Պողակ գիւղ սարսերի մէջ քրդեր երկու մարդ կրսպանեն։

3. Երկու հայ աղջիկ Քոշք գիւղէն Սիկսկցի Աշրէթ քիւրդերն բռնի և չարաչար տանջանքով կրսուտ նեն և կրսատակացնեն։ Այս քրդերս ցեղապետ Եուսուֆ-պէյն բռնի կերպով 15 եզ կ'սպանուի իւր էրբոր Պօլսէն վերադառնալն վերջ։

4. Ղարասու կոչուած գիւղում մի տուն ամբողջ գերդաստանով քրդերի ահէն սարսեալ կրմեռնին։ Մի տղայ ևս Դուկնուկ գիւղէն կրմեռնի մի անպարտ զրպարտութեան պատճառով։

5. Երկու գիւղ որ Աշրէթէն երկու և կէս ժամ չափ հեռաւորութիւն ունի իրարից, բնակիչները ևս հայ կաթոլիկներ են, ուստի բանտարկեալ կրմնան։ Բայց կառավարչութեան երկիւղէն սարսեալ կրմնան թիւն ցանձառաջիկ փորձանքներ։ Երկու մատաղահասակ տղոց և երկու աղջկոց, իսկ մեծ տղան փախաւ։ Աղջիկներն այժմ թուրք զօրականներու տակ յանձն կ'առնուին։ Ինչն ևս Աշրէթի մէջ կրզտնուի ունենալով մեծ քանակ տաճիկ մոլեռանդ ժողովրդեան։

6. Ճաղատալ քիւրդ գիւղի մէջ Արսակ-աղայ արենապետ քիւրդ մի Բիթլիսեցի ոտչ կրմնալով իւր քովը կրպահէ։

7. Խոշան գիւղ քրդերի ահէն և երկիւղէն սարսեալ կրմնալով հասք տուած է, կարողանալով նամնեզ այդ անասունի չարչարանքներն ու տառապանքները, որ նոքա կրտանին բեղերին։

8. Զատան գիւղ մայիսի 25-ին գիշեր ատեն 50-ի չափ քիւրդ կրտգան և կրնաչարին. մինչև արշալոյս զինուոր կրտեղայ գիւղի վրայ, թէև դիւղացիք կրդիմադրեն, բայց չունին ինքնինքնին սատպանելու զէնքեր. ցորեկ ևս լիքեալ քրդեր կրտգան և կրտարեն գիւղացոց կամ 100 լիրա դրամ կամ ասելի վերջ ապահով չմնալ։

9. Արշակերտ գիւղ մի անուն մայիսի 22-ին կրբռնարկեն տասնմեկ հոգի։ Գիւղն ու կրբռնարեն, իսկ մարդիկ ցանցարկեալ են, թէև դեռ չեն գտեր, բայց մի ազգային տարութիւնից ու Եղիշէից զատ Օրբատ Գրիգորի կառավարութեան ու քրդերու հարատարդ թիւրք, հանանուն վերջինների, որոնց ցեղապետ Բարբ ան Խուրանն 3-ը և 4-ը կարգի պատանի ունի և վերայարուն իրենց սիրեր։

10. Ախլաթից գրում են. սեղուցս գայմագամ Բրայիմ—բէյ անունամբ մէկ, որ բաղինչ Վալիի ցանկն է քանի մը հատ տարիներ խրկելով անմիջապէս ժամանակ ոչ որ տարբ կրպատանչէ եղեր, ոչ խարբ, կրվ կիսագին ծախել տալով։ Իսկ որք ոչ կարող, գայմագամ դատիկաններուն ի դիմանալ, ետ մէջ փակել և մոռնալ տալ։

Բաղէշից մեզ գրում են, որ երեք Բաղինչցի հայ վաճառականներ Վանից Բաղէշ դնալու ժամանակ քրդերը շարձակվում են դրանց վրայ կողոպտելու նպատակով, բայց չկարողանալով իրենց ոչ ոչ ոչ տել, երբին էլ ետ դառնում են և նրանց բոլոր ապրանքը փախցնում։

Ընդհակառութիւն Ակաշկերտից

Թէմր կոչուած քիւրդն, երևելի ստոգաբանեան՝ աշնանակ սիսեալ դարդ ինկած հայ գիր գիր, իւր տասը ընկերոջն հանդերձ միասին տակ կրժոդով, շատ խառութիւն և բռնութիւն բանեցնելով խեղճ ժողովրդեան վրայ և այսպիսով իւրաքանչիւր գիւղին՝ 10, 20, 30 արծաթ առնելով, կըթողնի կ'երթայ մի այլ տեղ։ Այդ ստոգակապետ քանի մի անգամ մարդ ուղարկեց մեր գիւղ՝ Սենեալու Տ. Պ. Քին. թէ կամ 50 հատ լիրա վճարեցէք և կամ՝ քո կիանքդ։ Իսկ զալով ամառուայ կրած գեղծումներուն թէ անասնոց և թէ արմտեաց նկատմամբ յոյժ անթուելի է։ Մեր գիւղի մէջ միայն 50—60—ի չափ անասուններ գողացան, 150-ի չափ սայլից առաւել արհի այրեցին. ամեն գիւղի առհասարակ միւնոյն չափով և ոչ նուազ ինաներ հասուցին։ Զաղի գիւղ մի երիտասարդ սպանեցին, Խոր գիւղ մի մարդու դաշոյնի 25 հարուածով միրաւորեցին, և այլն և այլն, մեծամեծ ինաներ ու մարդասպանութիւններ կատարելով։ Իսկ կառավարութեան բոլոր արուած ժամանակին ամենևին ունկնդրութիւն չի՞լինիր և ի նկատի չեն առնուր հայի ինան ու տառապանքը։

Իսկ Վաղարշակերտի տեղակալ (դայիմմագամ) Ահմատ-ագէ կոչուած անձը իւր (Վաղարշակերտի) ժողովուրդն աշնանակ սիսեալ դարդ յայտնապէս կողոպտած է՝ իւրաքանչիւր անձէն 20, 30, 40 լիրա բռնի կաշառք առնելով և 20-ի չափ մարդի ևս բռնատարկելով. վեց ամիսի մէջ, որը տակաւին բանալ կրկենան, անպատմելի ու հարատևարութիւնների ենթարկուելով։ Կառավարութեան կողմանէ բոլորովին արգելուած է բանտարկեալներին հայի երես տեսնելը։

Բրկի Ցարութիւն կոչուած անձի (որ այժմ Ռուսաստան կը դտնուի) մէջ կառավարութեան կողմանէ կրկանչուի. կը հարցնեն թէ՝ քո այր Ցարութիւնը ո՞ւր է, քեզանից այժմ կ'ուզենք։ Նա կպատասխանէ՝ ես ինչ գիտեմ՝ ուր է գնացեր, նա այր, ես կին, կարող ե՞մ իշխել նրան։ Այս պատճառով երկու օր կրբանտարկեն։

Վերջապէս հարատև բռնութիւն, բռնակալութիւն, գեղծումն և այլն հայ սծանք չի մնար, որ չկատարուի թէ քրդերի և թէ կառավարութեան կողմէ մեր խեղճ հայ ժողովրդեան վրայ։

Երանոս կոչուած գիւղէն մի պատանի բռնի կրծնափոխ ըրին Կառավարութեան միջոցով՝ Երզրումի Վալի փաշայի ներկայութեամբ, որ Գարաքիլիսէ գիւղաքաղաքի մէջ կրգտնուէր նոյն միջոցին։

Տաճկա-Հայաստանի մի ուրիշ անկիւնից գրում են։ —Եղբարք, քիչ խօսքով կրգրեմ ձեզ, դուք իմացէք։ —Որքան որ բանտարկեալ կայ թէ Կարին, թէ տեղ և թէ Կոզովիտ, բոլորն ալ Կոզովիտ տարուած են։ Վաղարշակերտի մնացած ժողովուրդը թէ գիւղեր և թէ տեղս իրենց անձին տեր չեն. կըլսայ որ քանի մը աւուր յետ ամենը բանտարկուին, ամեն օր վայնասուն, տներու մէջ խուզարկութիւն կընեն խարազանի հարուածներով, խեղճ կնանիքներ կըծեծուին՝ հրացաններ կըպահէք ասելով։ Ոստիկաններ գիւղեր կ'երթան, իզուր տեղ կըչարչարեն և դրպարտութիւններ կ'անեն, թէ դուք ապստամբ էք. կըխոնեն, խեղճերէն բռնի փարաներ կ'առնեն, տուրք հաւաքելուն համար մարդագլուխ երկու-երկու հաւ կ'առնեն կ'ուտեն։

Եղբարք, որտեղ որ կըբողոքենք, մեր բողոքը մեզի կըմնայ առանց լսելի դիմելու։ Եթէ երկինք բողոքենք, ան ալ լուռ կըմնայ, եթէ երկրին բողոքենք, մեր բողոքը Եկրատայ խորշերուն մէջ կ'իյնայ և ալիքների հետ մէկ տեղ կըկորուի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այն օրուանից, երբ գրուել է մեր նախընթաց համարի տեսութիւնը, Եւրոպայի արտաքին քաղաքականութեան մէջ եղան շատ նշանաւոր դէպքեր։ Եռապետեան դաշնակցութիւնը վերանորոգուեց էլի 6 տարով։ Ռուսաստանի և Ֆրանսիայի յարաբերութիւններն աւելի ներս բնաւորութիւն ստացան և հաստատուեցան Կրոնշտատի օրերից յետոյ։

Անգլիան, թէև ըստ ամենայնի ուզում է չեզոք դիրք բռնել, բայց էլի իւր բոլոր հակումներով և նոյն իսկ շահերով շատ մօտ է եռապետեան դաշնակցութեան։ Օսմանեան պետութեան բռնելիք դիրքը մինչև այժմ դեռ անորոշ է։ [illegible] տալիս զանազան ենթադրութիւններին։ Նոյն իսկ վերջերումս պատահած Թիւրքիայի նախարարութեան փոփոխութեան պատճառների մասին զանազան կարծիքներ են յայտնուում։ Նպատերը՝ մեծ մասամբ Ֆրանսիական և ռուս լրագրները բացատրում են այդ այն յաղթութեամբ, որ ունեցաւ ռուսաց դիպլոմատիան Դարդանելեան ջրանցքի հարցում, և այսպիսով նախարարութեան փոփոխելը մեկնաբանում են այն հանգամանքին, որ Ֆրանս-ռուսական դաշնակցութիւնից յետոյ այդ երկու պետութիւնների ազդեցութիւնը Սուլթանի վրայ սկսեց զօրեղանալ, այն ինչ ընդհակառակը Անգլիայի և եռապետեան դաշնակցութեան նշանակութիւնը և ազդեցութիւնը սկսեց ընկնել։ Դրանք ասում են որ Զեվատ-փաշան, որ փոխարինել է Քեամիլ-փաշային, յայտնի է, իբրև ռուսաց քաղաքական ազդեցութեան ջերմ կողմնակից։ Գերմանական և անգլիական մամուլն ընդհանրապէս աշխատում է բացատրել այդ փոփոխութիւնը ներքին

պատճառներով։ Նրանց խօսքերով՝ Սուլթանը մասամբ սատրիկ բարկացած լինելով մեծ վէզիրի վրայ որ նա չի կարողանում վերջ դնել յաճախ կրկնուող աւազակային խմբերի յարձակումներին, միւս կողմից էլ լսելով մի ինչ-որ դաւադրութեան մասին իւր դէմ, որի մէջ մասնակցում էր իբր թէ և Քեամիլ-փաշան, վճռում է հեռացնել նրան և մինչև անգամ պատասխանատուութեան ենթարկել։ Բացի դրանից Սուլթանը շատ անբաւական էր որ Եմենի ապստամբութիւնը մինչև հիմա դեռ չկարողացաւ խաղաղեցնել Քեամիլ-փաշան։ Թէ այդ պատճառաբանութիւններից որն է աւելի ճիշտը, դժուար է որոշել, բայց մի հանգամանք, որ կարող է ցոյց տալ, թէ այս դէպքում արտաքին քաղաքականութիւնը շատ քիչ դեր է կատարել, այդ այն է, որ արտաքին գործոց նախարարը միակն է, որ մնացել է անփոփոխ նոր նախարարութեան մէջ, —այն է Սայիդ-փաշան։

Այդ միևնոյն ժամանակ, սպառնալի լուրեր են շարունակում գալ Բ. Դուռը թէ Կրետէ կղզուց և թէ մանաւանդ Եմենից։ Վերջինի ապստամբութիւնը շատ ծանր հարուած տուեց Սուլթանի տիրապետութեանը Փոքր-Ասիայում։ Հայաստանի դրութեան մասին Սուլթանը վերջերումս բոլորովին հանգստացած է երևում՝ ոչ մի շարժման ձայն չլսելով. ուստի բարենորոգումների գործը նա տրամադիր է աւելի ևս յետաձգել։

Եւրոպական դիպլոմատիան դատապարտելի սառնասրտութեամբ նոյնպէս մոռացութեան է տուել Հայոց հարցը, զբաղուած լինելով զանազան մանրակրկիտ շահասիրական խնդիրներով։ Մի անգամ դրուեց լրագրների մէջ, թէ մտադրութիւն կար հրաւիրել միջազգային կոնֆերենցիա մի քանի նոր յառաջ եկած հարցեր (Նրանց թւում և Հայոց հարցը) կարգաւորելու համար։ Բայց այդ միտքն այլևս չկրկնուեց, և դեռ երկար ժամանակ կլռէք, եթէ մենք՝ հայերս սպասենք որ Եւրոպան ինքը իւր ինիցիատիվով զբաղուի հայկական հարցով։ Մենք արդէն շատ անգամ յայտնել ենք այն միտքը, որ Եւրոպան միայն այն ժամանակ լուրջ կերպով կզբաղուի մեր հարցով, երբ տաճկա-հայ ժողովուրդը ոտքի ելնելով զօրեղ բողոք կներկայացնի այդ Եւրոպային-իւր դրութեան պայմանների մասին, և դնդակների ու սրերի շղնջոցի տակ կդնի Եւրոպայի առաջ իւր պահանջները։ Թող այդ միտքը լաւ ըմբռնեն մեր հարուստները և կեղծ-ինտելլիգենտները, որոնք իրանց կոպէկները խնայելով հանդերձ միևնոյն ժամանակ անտարբերութեամբ քարոզում են, թէ պէտք է ոչինչ չանել և դեռ սպասել ու յուսալ դիպլոմատիայի բարեպատեհ փոփոխութիւնների վրայ։ Իսկ եթէ այդ բարեպատեհ փոփոխութիւնները մեզ բոլորովին անպատրաստ գտնեն, ինչ կ՚անենք այն ժամանակ։

Եւրոպական մամուլը, որ նոյնպէս կարող է երբեմնական ազդակալի դէպքերի, որ զբաղուի որևէ հարցով, ի հարկէ հիմա աւելի քիչ է խօսում մեր հարցի մասին։ Բայց և այնպէս համակրական յօդուածներ յօդուտ մեր դատի շարունակում են երևալ եւրոպական թերթերում։

Այստեղ կյիշենք միայն դրանցից մի քանիսի մասին։

Փարիզի «Օբսերվատոր Ֆրանսէզ» թերթի Պօլսի թղթակիցն առաջ բերելով Թիւրքաց ճնշումների բազմաթիւ փաստեր, վերջացնում է այսպէս. «Թէև Սուլթանը յոյս դնելով գերմանացոց կայսրի վրայ մերժում է ինկատի առնել մարդկային օրէնքներն ու քաղաքակրթութեան շահերը, այնուամենայնիւ անօգուտ չի լինիլ առաջ բերել այն հաստատ փաստերը՝ մանաւանդ երբ հակապատկեր այն փքուն և անհիմն ներբողների, որ յայտնի Ֆրանսիական թերթեր գրում են Սուլթան Աբդիւլ-Համիդի «ազատամիտ» և «բարեխնամ» կառավարութեան մասին»։ Մի ուրիշ շատ յայտնի Ֆրանսիական թերթ նոյնպէս միքանի սարսափելի փաստեր բերելուց յետոյ ասում է հետևեալը. «Եթէ կայ համերաշխութիւն քաղաքակրթուած ազգերի մէջ, ապա ուրեմն պէտք է ասել, որ Հայ ազգը, որի քաղաքակրթութիւնն անցնում է նոյն իսկ Յոյն-հռոմէական ժամանակներից, անպաշտպան ենթարկուած է բարբարոսների տիրապետութեանը։ Զարմանալի է որ արշաւանքներ են անում Աֆրիկայի ստրկութեան դէմ և անտարբեր տանում են սարսափելիքներ Եւրոպայի աչքի առաջ»։ Մի անգլիացի օրիորդ Բիշոփ անունով, որ երկար ճանապարհորդել էր Տաճկա-Հայաստանում, մի դասախօսութիւն է կարդացել Լոնդոնում, որի վրայ մեծ ուշադրութիւն են դարձրել բոլոր լրագրները։ Նա յայտնել է բացարձակապէս, որ «ոչ թէ միայն գոյքի, այլ և կեանքի կատարեալ անապահովութիւն է տիրում քրիստոնէական նահանգներում»։ Օրիորդը տեսակցութիւն է ունեցել Պօլսում մեծ վէզիրի հետ և դուրս է բերել այն եզրակացութիւնը, որ նա մինչև անգամ տեղեակ չէր քիւրդերի այն չարագործութիւններին, որոնց մասին ինքը օրիորդը լսել էր՝ նոյն իսկ տեսել իւր ճանապարհորդութեան ժամանակ։

Ֆրանսիական մի ուրիշ թերթ հայկական հարցին մի ահագին առաջնորդող յօդուած է նուիրում, որ գրուած է շատ համակրական կերպով, և եթէ տեղը ներէր մենք յառաջ կբերէինք այդ յօդուածն ամբողջովին, բայց առայժմ ստիպուած ենք այդ յետաձգել։

Վիեննա. Դաշնակցութեան ապար. տպարան